ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

22.04. 2017թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյաը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը, Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի մասնագիտությունների 2017-2021 ուս. տարվա ուսումնական պլանների քննարկման և հաստատման մասին:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
2. Ֆակուլտետի մասնագիտությունների 2017-2018 ուս. տարվա ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
3. «Տնտեսագիտության տեսություն» և «Սերվիս» մասնագիտությունների չորրորդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/

1.Լսեցին -Հ. Մարզպանյանին

«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանը նշեց, որ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն անհրաժեշտ է քննարկել և հաստատել «Ֆինանսներ » մասնագիտության 2017 – 2021 ուսումնական պլանի նախագիծը: Նկատի ունենալով, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը առաջնորդվում է ԵՊՀ –ի համապատասխան մասնագիտությունների

ուսումնական պլաններով, ուստի մասնաճյուղի «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնը կարող է առաջնորդվելով ԵՊՀ համապատասխան մասնագիտության ուսումնական պլանով, սակայն կարող է կատարել որոշակի փոփոխություններ (սահմանափակ), ելնելով մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններից:

Հ. Մարզպանյանը ներկայացերեց «Ֆինանսներ » մասնագիտության 2017 – 2021 ուսումնական պլանի նախագիծը, որը քննարկվել է «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի նիստում(կատարվել է որոշակի փոփոխություններ):

Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ ներկայացված 2017 - 2021 «Ֆինանսներ » մասնագիտության ուսումնական պլանի նախագիծը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և առաջարկեցին հաստատել:Նիստի մասնակիցների կողմից առաջարկություններ և դիտողություններ չեղան, ընդհանուր առմամբ ներկայացված 2017 – 2021 ուսումնական պլանի նախագիծը համարեցին համապատասխան «Ֆինանսներ » մասնագիտության պահանջներին:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց « Զբոսաշրջություն » մասնագիտության 2017-2021թթ ուսումնական պլանը: Նա նշեց, որ նոր մասնագիտության ուսումնական պլանը մասնագիտական հանձնաժողովի կողմից բերվել է վերջնական տեսքի, ըստ որի մասնագիտական դասընթացների կրթաբլոկում դրվել են 35 կրթական մոդուլ, իսկ կամընտրականում՝ 20:

Արտահայտվեցին- Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը

Նրանք նշեցին, որ ներկայացված 2017 - 2021 ուս. տարվա « Զբոսաշրջություն » մասնագիտության ուսումնական պլանի նախագիծը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և առաջարկեց ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ » և « Զբոսաշրջություն » մասնագիտությունների 2017-2021 ուս. տարվա ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

2. Լսեցին - Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը նշեց, որ 2017-2018 ուս. տարվա «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երկու տարիների ուսումնական պլաններից, իսկ առաջին կուրսի ուսումնական աշխատանքային պլանը՝ 2017 - 2021 ուս. տարվա «Ֆինանսներ »

մասնագիտության ուսումնական պլանից, երկրորդ կուրսի ուսումնական աշխատանքային պլանը՝ 2016-2020 ուս. տարվա «Տնտեսագիտություն» մասնագիտության ուսումնական պլանից :

2017 - 2018 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների աշխատանքները:

Նա նշեց, որ 2017 - 2018 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2017-2018 ուս տարվա «Սերվիս» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից, իսկ « Զբոսաշրջություն » մասնագիտության ուսումնական աշխատանքային պլանը՝ 2017 - 2021 ուս. տարվա « Զբոսաշրջություն » մասնագիտության ուսումնական պլանից :

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը

Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված աշխատանքային ուսումնական պլանների նախագծերը ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին – հաստատել ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն», «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ », «Սերվիս» և « Զբոսաշրջություն » մասնագիտությունների 2017-2018 ուս. տարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

3.Լսեցին - Ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» և «Սերվիս» մասնագիտությունների չորրորդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին :

/Զեկ. Գ. Հովհաննիսյան, Հ. Մարգպանյան/

Լսեցին- Գ. Հովհաննիսյան

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ <<Սերվիս>> մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը անց է կացվել ժամանակացույցին համապատասխան /ապրիլի 22-ին/: Նախապաշտպանությունը անցկացվեց ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և ավարտական աշխատանքների ղեկավարների մասնակցությամբ, որը հնարավորություն տվեց առկա խնդիրներից շատերը լուծել տեղում: Նախապաշտպանության ընթացքում համարյա բոլոր ուսանողները վերջնական տեսքով ներկայացրին և պաշտպանեցին իրենց աշխատանքները. որոշ աշխատանքներում հիմնական թերությունները կապված էին

ներածության, եզրակացությունների և քարտեզների կազմման հետ: Բոլոր ուսանողներին հնարավորություն տրվեց ամբիոնից ներկայացնել իրենց աշխատանքները: Անհատապես բոլորին նշվեցին աշխատանքներում առկա թերությունները և տրվեցին դրանց վերացման սկզբունքները :

Լսեցին - Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը:

Հ. Մարզպանյանը նշեց, որ ապրիլի 29-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Ավարտական աշխատանքների ղեկավարները համաձայն հաստատված գրաֆիկի կատարել են խորհրդատվություններ և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքները ժամանակացույցին համապատասխան են ընթանում, իսկ որոշ ավարտական աշխատանքներում առկա են տեխնիկական թերություններ, որոնք անհրաժեշտ է վերացնել մինչև մայիսի 10-ը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Գրախոսման համար տրվում է ոչ ավել, քան 10 օր: Գրախոսությունը ստանալուց հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ փոփոխություններ կատարել: Հ. Մարզպանյանը ներկայացրեց գրախոսողների կազմը /կցվում է/:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Հ. Ազիզիյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ որոշ ուսանողների մոտ կան տեխնիկական թերություններ: Պետք է սեղմ ժամկետում վերացնել թերությունները և ներկայացնել ամբիոն:

Որոշեցին - Պահանջել ուսանողներից մեկ շաբաթյա ժամկետում թերությունները վերացնել, աշխատանքները կանոնակարգված տեսքի բերել և ներկայացնել ղեկավարներին `կարծիք գրելու համար:

Գիտխորհրդի նախագահ ***Ն. Խուդավերդյան***

Քարտուղար ***Ա. Սարիբեկյան***